

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

Առաջակացնելու ժամանակաշրջանը՝ 2023 թվականի փետրվարի 15-ին՝ ժամը 11⁰⁰-13⁰⁰:

2) Նիստի օրակարգը՝

1. «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար ժաննա Անդրեասյանի ողջոյնի խոսք»
2. ««ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի նախագծի ներկայացում /զեկուցողներ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյան, Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյան/
3. Նիստի մասնակիցների ներկայացրած հարցերի և առաջարկների շուրջ քննարկում

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց տվյալները՝

Նախարարին կից աշակերտական խորհրդի 43 անդամից նիստին մասնակցել է 17-ը:

4) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները.
«ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի» նախագիծը քննարկվել է «ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի նիստում, որում ներգրավված են «ՀՀ մարզերի և երևանի հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների բարձր դասարանների աշակերտներ։ Ողջունելով հանդիպման մասնակիցներին՝ նախարար ժաննա Անդրեասյանը նշել է, որ աշակերտական խորհրդի բոլոր հանդիպումներն անցնում են բովանդակալից. կարևորվում են խորհրդի անդամների հնչեցված դիտարկումները, որոնք անպայման քննարկվում են և, ըստ անհրաժեշտության, տեղ գտնում փաստաթյութերում: «Աշակերտական խորհրդը մեր ամենակարևոր հարթակն է. ծեզ հետ քննարկումները ցույց են տալիս, թե ԿԳՄՍ ոլորտներում ինչպիսի փոփոխությունների կարիք կա: Ուրախ եմ, որ 6-ամյա ընդմիջումից հետո ընդունվել է «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը», որում նախանշված են բավականին հավակնոտ թիրախներ: Գործողությունների ծրագիրը ներկայացնում է այդ թիրախներին հասնելու միջոցառումների պլանը, և կարևոր է լսել ծեր դիտարկումները՝ արդյոք բոլոր անհրաժեշտ քայլերն են ներառված այդ պլանում, և ինչպես որանք դարձնել առավել թիրախային՝ արդյունքային ցուցանիշների մասով», -նշել է նախարարը՝ շնորհակալություն հայտնելով խորհրդի անդամներին մշտապես շահագրգիռ և արդյունավետ քննարկումներ ունենալու համար:

Հանրակրթության և նախնական ու միջին մասնագիտական կրթության ուղղություններով նախատեսվող գործողությունների ծրագիրը ներկայացրել է նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Նա փաստել է՝ նախագծով մինչև 2030 թվականը կրթության բոլոր մակարդակների համար նախատեսվող գործողություններն իրականացվելու են փոխկապակցված՝ հետևյալ երեք ռազմավարական ուղղություններով. համընդիանություններուն սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, կրթության արյունավետության բարձրացում և կրթական ծառայությունների միջազգայնացում:

Անդրադառնալով նախադպրոցական կրթության ոլորտում սահմանված նպատակներին՝ Արաքսիա Սվաջյանը շեշտել է, որ նախանշվել է բավականին հավակնությունը՝ մինչև 2026 թվականը 5-6 տարեկան երեխաների խմբերի համար ունենալ նախադպրոցական ծառայությունների ծածկույթի 95 տոկոս ապահովում: Նրա խոսքով՝ նախատեսվում է նաև ընդլայնել նախադպրոցական հաստատությունների ցանկը՝ ներդնելով այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելներ: «Նախադպրոցական կրթության բովանդակության և որակի բարելավման տեսանկյունից մինչև 2026 թվականը նախատեսում ենք բոլոր հաստատություններում ներդնել նախադպրոցական նոր չափորոշիչները, որի արդյունքում սահուն անցում կկատարվի դեպի դպրոցական կրթություն: Կներդրվեն նաև նախադպրոցական հաստատությունների աշխատակիցների մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացմանն ու հզորացմանն ուղղված խրախուսման մեխանիզմներ», - նշել է փոխնախարարը:

Անդրադառնալով հանրակրթության ոլորտին՝ Արաքսիա Սվաջյանն ընդգծել է դպրոցներում անվտանգ, հագեցած և արդիական միջավայրի կարևորությունը՝ շեշտելով «300 դպրոց և 500 մանկապարտեզ» պետական ծրագիրը: Այդ համատեքստում նախարարի տեղակալն ընդգծել է հանրապետության բոլոր դպրոցներում ԲՏԾՄ առարկաների լաբորատորիաների ստեղծման կարևորությունը: Արաքսիա Սվաջյանը ներկայացրել է նաև հանրակրթության պետական չափորոշիչ ներդրման գործնթացը, որն ապահովելու է որակապես նոր կրթություն և սովորողի ակտիվ դերակատարում: Փոխնախարարն անդրադարձել է նաև ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման և խրախուսման մեխանիզմների ներդրմանը՝ կամավոր ատեսավորում և տարակարգ: Արաքսիա Սվաջյանը ներկայացրել է գյուղական փոքր համայնքներում ուսուցիչների պակասի, որոշ համայնքներում սովորողների և ուսուցիչների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման, էլեկտրոնային շտեմարանների, հեռավար դասավանդման և այլ հարցեր:

Անդրադառնալով արտադպրոցական կրթությանը՝ նախարարի տեղակալը կարևորել է, որ բացի դպրոցական կրթությունից՝ սովորողները մասնակցեն նաև արտադպրոցական միջոցառումների, հաճախեն արվեստի կենտրոններ և մարզադպրոցներ: Նա ներկայացրել է այդ դպրոցների մանկավարժական աշխատողների խրախուսման և վարձատրության բարձրացման մեխանիզմների ներդրման հարցը:

Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում Արաքսիա Սվաջյանը կարևորել է ՄԿՈՒ հաստատությունների քարտեզագրման, տնտեսության համար առաջնահերթ համարվող մասնագիտությունների վերհանման, հանրապետական նշանակության հաստատությունների ստեղծման հարցերը: Նա կարևորել է նաև հաստատությունների շենքային պայմանների բարելավման, որակյալ կադրերի ներգրավման, աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման և այլ խնդիրներ:

Բարձրագույն կրթության ոլորտում նախատեսվող գործողությունների ծրագիրը ներկայացրել է ԿԳՄՍՆ բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության վարչության պետ


Լուսինե Գրիգորյանը: Նրա խոսքով՝ ծրագրում որպես վերջնական արդյունք սահմանվել է, որ առնվազն չորս բուհ ընդգրկված է լինելու միջազգային վարկանիշային արյուսակների լավագույն 500-ի մեջ, որին հասնելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել ենթակառուցվածքների բարելավում՝ այն գուգակցելով բովանդակային փոփոխություններով: Նա ներկայացրել է Որակավորումների ազգային շրջանակի, առանձին ոլորտային շրջանակների և դրանց արդյունքում՝ կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ նախատեսվող քայլերը, ինչպես նաև բուհերում հետազոտական բաղադրիչի և լարորատորիաների առկայության հարցերը: Անդրադառնալով ակադեմիական քաղաք ունենալու գաղափարին՝ նա նշել է, որ դրա վերջնանպատակը սովորողների և դասախոսների համար ուսումնական որակյալ և լիարժեք միջավայրի ստեղծումն է, որտեղ մեկտեղված են լինելու հարմարավետ միջավայրը, հանրակացարանային կոմպլեքսը, գրաթափային գրադարանները, սպորտային համալիրները և այլն: Վարչության պետը ներկայացրել է նաև բուհերի խոշորացման ուղղությամբ նախատեսվող ծրագրերը՝ որտեղ որպես վերջնական թիրախ սահմանված է, որ կստեղծվի 100% պետական ֆինանսավորմամբ մինչև ութ բուհ: Աշակերտներին ներկայացվել են նաև բարձր որակավորում ունեցող դասախոսների, բուհերի ֆինանսավորման բանաձևի փոփոխության, մրցակցային հետազոտական ծրագրերի և արդյունավետության ցուցանիշների վրա հիմնված բուհերի լրացուցիչ ֆինանսավորման, սովորողների ուսման վճարի, ինչպես նաև ակադեմիական տարկետման հետ կապված նախատեսվող փոփոխությունները:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.

Ձեկուցումներից հետո աշակերտները մի շարք հարցեր են ուղղել բանախոսներին, որոնք, մասնավորապես, վերաբերել են ընդունելության քննությունները տարվա ընթացքում երկու անգամ կազմակերպելու նոր կարգին, օյմափառաների կազմակերպմանը, ակադեմիական քաղաքի նախագծին, ընդունելության մեխանիզմներին և շտեմարանների բովանդակությանը, կրեդիտային համակարգին և այլն:

Նիստի ավարտին նախարարի տեղակալ Արաքսիա Սվայանը շնորհակալություն է հայտնել շահագրգիռ քննարկման համար՝ հորդորելով այսուհետ ևս ակտիվ լինել կրթության ոլորտի բարեփոխումներին առնչվող գործընթացներում: Քանի որ այս կազմով աշակերտական խորհուրդը գումարել է իր վերջին նիստը՝ նախարարի տեղակալը ներկաներին մաղթել է հետագա հաջողություններ կրթության այլ մակարդակներում՝ մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնելով նախորդ երկու տարիների համագործակցության համար:

Նիստի նախագահող



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարար Ժաննա Անդրեասյան

Արձանագրող՝



ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի պետ
Հեղինե Հովհաննիսյան